Գրաբարագիտական հանդես

ՀՈՒՆ
ՍԱՏԵՆԱՇԱՐ

Clive Staples Lewis

The screwtape letters

Letters from a senior
to a junior devil

Քլայվ Սթեյփլս Լուիս

Խոսող կենդանիների համակերպը

Ավագ դևի նամակները՝
կրտսեր դևին

Թարգմանությունն անգլերենից՝
Աննա Դանիելյանի

ԵՐԵՎԱՆ
2025

ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ
Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ
ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՏԴ 821.111-31 Լուիս
ԳՄԴ 84(4Մբ)-44
Լ 888

Լուիս Քլայվ Սթեյփլս
Լ 888 Խառնակչի նամակները: Ավագ դևի նամակները՝ կրտսեր դևին / Ք. Ս. Լուիս.- Եր.: Newmag, 2025.- 168 էջ:

Ք. Ս. Լուիսի «Խառնակչի նամակները» կլանիչ ու խորաթափանց ստեղծագործություն է: Հեղինակը մարդկային կյանքի գայթակղությունները, սխալները և բարոյական պայքարը ներկայացնում է յուրօրինակ տեսանկյունից: Գրքում ավագ դև Խառնակչի նամակներն են, որոնք նա հղում է իր անփորձ զարմիկին՝ Գարշուկին: Խորհրդատուի դերում հանդես եկող Խառնակիչը սովորեցնում է, թե ինչպես պետք է գայթակղել և մոլորեցնել երկրի վրա ապրող մարդուն, կասեցնել նրա հոգևոր առաջընթացը: Լուիսը պախարակում է մարդու թուլությունները, փառասիրությունը, ինքնախաբեությունը և նյութապաշտությունը: Պատումի ենթատեքստում ընթերցողին հրամցվում է բարոյական պայքարի էությունը և ընտրության դերը մարդու կյանքում: «Խառնակչի նամակները» գիրքն արտացոլում է Լուիսի բարոյական համոզմունքները: Այս գիրքը տասնամյակներ շարունակ արդիական ու ազդեցիկ է մնացել, հազարավոր ընթերցողների օգնել է վերանայել սեփական արժեքները և բարոյական ընտրությունները:

ՀՏԴ 821.111-31 Լուիս
ԳՄԴ 84(4Մբ)-44

Գիրքը հրատարակվել է Տիգրան Գալստյանի մեկենասությամբ:

ISBN 978-9939-967-82-0
Copyright © C. S. Lewis Pte Ltd 1942
Քլայվ Սթեյփլս Լուիս «Խառնակչի նամակները» © 2025, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հեղինակային բոլոր իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել THE CS LEWIS COMPANY LIMITED ընկերության հետ կնքած պայմանագրով:

Բովանդակություն

Հայերեն թարգմանության առթիվ 9

Նախաբան 17

ՆԱՄԱԿ I 19

ՆԱՄԱԿ II 23

ՆԱՄԱԿ III 27

ՆԱՄԱԿ IV 31

ՆԱՄԱԿ V 35

ՆԱՄԱԿ VI 40

ՆԱՄԱԿ VII 44

ՆԱՄԱԿ VIII 49

ՆԱՄԱԿ IX 54

ՆԱՄԱԿ X 59

ՆԱՄԱԿ XI 64

ՆԱՄԱԿ XII 68

ՆԱՄԱԿ XIII 73

ՆԱՄԱԿ XIV 78

ՆԱՄԱԿ XV 83

ՆԱՄԱԿ XVI 88

ՆԱՄԱԿ XVII 93

ՆԱՄԱԿ XVIII 98

ՆԱՄԱԿ XIX 103

ՆԱՄԱԿ XX 108

ՆԱՄԱԿ XXI 113

ՆԱՄԱԿ XXII 118

ՆԱՄԱԿ XXIII 123

ՆԱՄԱԿ XXIV 128

ՆԱՄԱԿ XXV. 133

ՆԱՄԱԿ XXVI 138

ՆԱՄԱԿ XXVII 143

ՆԱՄԱԿ XXVIII 148

ՆԱՄԱԿ XXIX 153

ՆԱՄԱԿ XXX. 158

ՆԱՄԱԿ XXXI 163

«Եվ իրոք, դժոխք կանող ամենաապահով ճանապարհն ասպիճանականն է՝ մեղմ, փափուկ թեքությունը, առանց կտրուկ շրջադարձերի, առանց ուղենիշների և ցուցանակների»:

Քլայվ Սթեյփլս Լուիս

ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

«Եւ ետես Աստուած զամենայն զոր արար, *եւ ահա բարի են յոյժ.* եւ եղեւ երեկոյ, եւ եղեւ վաղորդայն, օր վեցերորդ» (Ծննդոց Ա 31): Արարչության վեց օրերից յուրաքանչյուրի ավարտին Սուրբ Գիրքը նշում է, որ *բարի էր՝* հատուկ շեշտելու համար, որ Աստծո ամբողջ արարչությունը բարի է, այսինքն՝ չարը Աստվածային արարչագործության մաս չէ: Այս հանգամանքը մշտապես հետաքրքրել է մտածողներին՝ դրդելով փնտրել չարի ծագման ակունքը, հասկանալ դրա բնությունը և մարդու վրա ներգործելու հնարները: Վաղ միջնադարից սկսած՝ քրիստոնյա աստվածաբանները, մասնավորապես՝ ասկետիկ-ճգնավորական կյանքով ապրող հայրերը, իրենց գրվածքներում, հիմնվելով հատկապես անձնական փորձի վրա, ուսուցանում են, թե ինչպես է պետք հաղթել չարին և չեզոքացնել չարի ներգործությունը մարդու վրա:

Այս իմաստով բացառիկ է 20-րդ դարի բրիտանացի նշանավոր գրող, աստվածաբան Քլայվ Սթեյփլս Լուիսի (1898-1963) «Խառնակչի նամակները» գիրքը, որում հեղինակը ոչ թե հանդես է գալիս չարի դեմ պայքարող մարդու դիրքերից, այլ հակառակը՝ նրան անընդհատ կործանման մղող չարի կամակատարների: Լուիսն անցել է կյանքի գոյափոխման բարդ ուղի՝ աթեիզմից մինչև հաստատուն հավատքով քրիստոնյա: Նրա հոգևոր վերափոխման անձնական այս փորձառությունն էլ, խառնվելով իր գրական հանճարի հետ, դառնում է յուրահատուկ ստեղծագործական աղբյուր:

Նա ծնվել է Իռլանդիայում, դասավանդել և գիտական գործունեություն է ծավալել Օքսֆորդում ու Քեմբրիջում, հեղինակել է բազմաժանր գրքեր՝ գեղարվեստական գրականությունից մինչև աստվածաբանական էսսեներ, որոնցից շատերը դարձել են բեսթսելլերներ: Սակայն Լուիսին՝ որպես հեղինակի, հնարավոր է հասկանալ՝ հաշվի առնելով այն ժամանակաշրջանը, որում նա ապրել ու ձևավորվել է որպես գործիչ. դրանք երկու աշխարհամարտերի ծավալման և հետպատերազմյան ճգնաժամերի տարիներն են: Այս շրջանում եվրոպական հանրությունը, լայն իմաստով, ընկել էր խորը գոյաբանական խնդիրների մեջ. մարդկանց տանջում էր այն միտքը, թե ինչպե՞ս էին հնարավոր, թեկուզև տարբեր հարանվանություններին պատկանող, սակայն ընդհանուր քրիստոնեական հիմք ունեցող եվրոպական քաղաքակրթության մեջ այսպիսի կործանարար պատերազմներն ու փոխադարձ ատելությունը: Լուիսը՝ թե՛ որպես գրող և թե՛ որպես հանրային գործիչ, խորությամբ ներգրավված էր քրիստոնեական ապագայի հարցերում, բարոյականության սահմանների

և նոր մտածողության ձևավորման անհրաժեշտության շուրջ քննարկումներում, հատկապես Երկրորդ համաշխարհային պատերազմի ֆոնին: Եվ ահա այս համամարդկային աղետի ամենաթեժ տարիներին էլ (1941-1942) Լուիսը նախաձեռնում և հրապարակում է «Խառնակչի նամակները»: Քրիստոնեական մտածողության վրա հիմնվելով՝ նա փորձում էր բացահայտել չարի ներգործության ռազմավարությունը:

Գիրքը բաղկացած է Խառնակիչ (անգլ.՝ Screwtape) անունով ավագ, ավելի փորձառու դևի գրած 31 խրատական նամակներից՝ ուղղված Գարշուկ (անգլ.՝ Wormwood) անունով կրտսեր և անփորձ դևին, որը նոր-նոր է սկսում իրեն հանձնած Խնամարկյալին (մարդուն) գայթակղեցնելու և մոլորության մեջ գցելու իր գործունեությունը: Գրական այս մոտեցումը յուրահատուկ է նրանով, որ ընթերցողը ոչ թե լսում է Աստծո ձայնը, որին նամակներում անվանում է «Թշնամի», ոչ էլ ուղղակի կարդում է Եկեղեցու սուրբ հայրերի խրատները, այլ ներթափանցում է «խառնակիչ դևի»՝ մարդուն մոլորության մեջ գցող «ծրագրերի» մեջ: Հնարամտորեն գործադրելով հակառակ կողմի «դիրքերից» խոսելու այս հնարքը՝ Լուիսը բացահայտում է ճշմարիտ բարոյական ուղին:

Թեև հեղինակն ինքը չի վերնագրել նամակները, սակայն դրանք ունեն հստակ տրամաբանությամբ կառուցված հաջորդականություն՝ կապված դևերի թիրախում հայտնված Խնամարկյալի կյանքի փուլերի հետ. *հոգևոր անգիտությունից և ի քրիստոնեություն նորադարձությունից դեպի վախերով ու անորոշություններով լի պայքարի շրջան, ապա հոգևոր հասունությունից ճշմարիտ սիրո գիտակցում և ի վերջո՝ հաղթական մահ:* Նրա կյանքի յուրաքանչյուր շրջափուլի համար

Խառնակիչը գայթակղությունների յուրօրինակ ռազմավարություն է մշակում, որոնք կարելի է ամփոփել 6 հիմնական կետով: *Ա) Չարի ուղին՝ արդահայտված սովորականությամբ.* Լուիսը ցույց է տալիս, որ պարտադիր չէ՝ չարը լինի մռայլ, սարսափեցնող կամ բռնի: Այն հաճախ դրսևորվում է մարդու անտարբերությամբ, հարմարավողականությամբ, կիսաճշմարտություններին տուրք տալով: Խառնակիչն իր աշակերտին հորդորում է մարդուն ոչ թե ուղղակիորեն ստիպել մեղքեր գործել, այլ դրդել, որ հանգիստ մոռանա Աստծո մասին և տարվի հպարտությամբ, սոցիալական կարծիքներով, աշխատանքով կամ նույնիսկ չափազանցված բարեպաշտությամբ: Այսպիսով, չարը չի ստեղծում որևէ նոր բան, այլ միայն աղավաղում է բարին: *Բ) Հոգևոր անգիտակցությունը՝ որպես վկանգ.* մարդուն հնարավոր է առ Աստված ճանապարհից հեռացնել առանց որևէ ակնառու մեղքի, եթե նա ուղղակի մոռանում է աղոթել, դադարում է ականջ դնել իր խղճի ձայնին և ինքն իրեն թույլ է տալիս վարժվել զուտ ինքնաբավ կյանքին: *Գ) Ժամանակի գիտակցման աղավաղում.* չարի ամենաազդու զենքերից մեկը մարդուն մղում է ապրել կա՛մ միայն անցյալի մեղքերով, կա՛մ ապագայի հանդեպ տագնապով ու զրկել ներկան գիտակցելու և կարևորելու հնարավորությունից: Այնինչ հենց ներկա պահն է հոգևոր կյանքի իրական տարածաժամանակը, և այս կյանքում հենց այդտեղ է հնարավոր իրական հանդիպումը Աստծո հետ, հետևաբար նաև անցյալի իրական արժևորումն ու ապագայի հանդեպ վստահությունը: *Դ) Սիրո հասկացության այլասերում.* սերը, սեռականությունը և զգացմունքային կապերը դառնում են նոր փորձադաշտ: Խառնակիչը ձգտում է

խեղաթյուրել սերը՝ փոխարինելով կրքով կամ դարձնելով գոռոզության, որոշ դեպքերում՝ եսասիրության աղբյուր: *Ե) Ինպելեկտուալ գայթակղություններ և աշխարհիկ/կեղծ հոգևորություն.* չարը մշտապես փորձում է շեղել հավատքի կենտրոնը՝ մարդուն դարձնելով կողմնակի՝ առաջին հայացքից մտավոր «վարժանքներով հիմնավորված» գաղափարների երկրպագու: Այդպիսով քրիստոնեությունը՝ դեպի Ճշմարտություն և Հավիտենություն տանող կենդանի ճանապարհը, խեղաթյուրվում է և վերածվում մշակութային, քաղաքական կամ զուտ բարոյական շարժման: Այդպիսով չարը ձգտում է պատրանքների, մշտական զվարճանքների և ուշադրությունը պարբերաբար շեղելու միջոցով մարդուն պահել այնպիսի վիճակում, որում նա ոչ ամբողջությամբ ուրախ է, ոչ ամբողջությամբ՝ դժբախտ. պարզապես՝ զբաղված, բայց ներսից՝ դատարկ: *Զ) Մահը՝ որպես փորձություն.* Լուիսի ձևակերպմամբ՝ մահը ծայրահեղ վտանգավոր է դառնում չարի համար, եթե մարդը վերջին պահին ապաշխարում է: Նույնիսկ այդ որպեին ապաշխարությամբ և մտքի արթնությամբ խաբեության ու ինքնախաբեության վարագույրը պատռվում է, և մարդը կանգնում է Ճշմարտության առջև՝ ազատագրվելով չարի կապանքներից: Հետևաբար գայթակղիչը փորձում է մարդու միտքը սևեռել ոչ թե մեղքի և դրանից ազատվելու անհրաժեշտության վրա, այլ ինքնին մահվան հանդեպ վախի վրա՝ այդպիսով մոռացնելով հոգու փրկության հարցը: Այս իմաստով մահը Լուիսի գրքում փորձություն է թե՛ մարդու, թե՛ գայթակղիչի համար: Դա այն պահն է, երբ բոլոր «խաղերը» վերջանում են, և յուրաքանչյուրը կանգնում է իր ընտրությունների հետևանքների առաջ: Ուստի չարը փորձում է ամեն

գնով խեղաթյուրել նույնիսկ մահ հասկացությունը՝ հաճախ այն ներկայացնելով որպես բնական ընթացք՝ առանց հոգևոր հետևանքների:

Գրքի հեղինակն անգլիկան եկեղեցու հետևորդ է եղել, այնուամենայնիվ ստեղծագործությունը զերծ է որևէ առանձին քրիստոնեական հարանվանության վարդապետական կամ դավանական սահմանումներից: Լուիսը գրում է՝ հիմնվելով զուտ քրիստոնեական բարոյականության ու հոգեբանության սկզբունքների վրա և հիմնականում սնվելով Եկեղեցու հայրերի՝ դարեր շարունակ կուտակած հոգևոր փորձով: Իզուր չէ, որ նրա որոշ երկեր, հատկապես՝ «Խառնակչի նամակները», գրաքննադատները համեմատում են Ֆյոդոր Դոստոևսկու հեղինակած ստեղծագործությունների հետ: Այս մոտեցումը թույլ է տալիս անկաշկանդ խոսել մարդկային խնդիրների և դրանց լուծմանն ուղղված քրիստոնեական մոտեցումների մասին:

Գիրքը հատկապես արդիական է մերօրյա հայ հանրության համար, որը վերջին տարիներին անդադար իրար հաջորդող ներազգային, նաև համաշխարհային աղետալի իրադարձությունների պատճառով հոգևոր, զգացմունքային և մտավոր թմրածության մեջ է հայտնվել: Այս պայմաններում մարդը հատկապես խոցելի է չարից, հետևաբար գրքի յուրաքանչյուր ընթերցող Խառնակչի նամակներից որևէ մեկում «Խնամարկյալի» դերում կգտնի ինքն իրեն ու գերի չի մնա դեպի կործանում տանող հակաճշմարտությանը, այլ նորովի կհասկանա կեղծիքների ժամանակակից աշխարհում մտքով և հոգևոր էությամբ արթուն լինելու կարևորությունն ու

անհրաժեշտությունը, կիաղթահարի չարի խաբեությունները և կիաղորդակցվի ազատագրող հավերժական ճշմարտությանը:

«Երթ յեկաս իմ, Սատանայ, զի գրեալ է.
Տեառն Աստուծոյ քում երկիր պագցես
եւ զնա միայն պաշտեսցես»:
Մատթ. Դ 10

Սարգիս Մելքոնյան
«Հուն» մատենաշարի ղեկավար

ամբողջական գիրքն այստեղ է՝
Bookmark